



Action funded by
the European Union

EU4Environment

Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Republic of Moldova, Ukraine

**Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա
ազդեցության անդրսահմանային գնահատման վերաբերյալ ուղեցույցի
առցանց քննարկում**

**Քննարկում I – Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի
նախարարություն**

Օրակարգի նախագիծ

**5 հունիսի 2020, Երևան, Հայաստան և Ժնև, Շվեյցարիա
Երևանի ժամանակով ժամը 11:00-ին, Ժնևի ժամանակով 09:00-ին**

Action implemented by:



Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության անդրասահմանային գնահատման վերաբերյալ ուղեցույցի առցանց քննարկում

Քննարկում II – Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն

**5 հունիսի 2020, Երևան, Հայաստան և Ժնև, Շվեյցարիա
Երևանի ժամանակով ժամը 11:00-ին, Ժնևի ժամանակով 09:00-ին**

Հանդիպման նախադրյալները

Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության անդրասահմանային գնահատման (ՇՄԱԳ) վերաբերյալ ուղեցույցի (Ուղեցույց) առցանց քննարկումը կազմակերպել են Միավորված Ազգերի Կազմակերպության Եվրոպական Տնտեսական Հանձնաժողովը (ՄԱԿ-ի ԵՏՀ) և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը Եվրոպական Միության ֆինանսավորմամբ իրականացվող “Եվրոպական Միությունը հանուն շրջակա միջավայրի” ծրագրի (այսուհետ՝ <<EU4Environment>> ծրագիր) շրջանակներում:

Հանդիպման նպատակը և ակնկալվող արդյունքները

Առցանց հանդիպման նպատակն է քննարկել Ուղեցույցի ընդլայնված տարբերակը, որը նախագծել են ՄԱԿ-ի ԵՏՀ ՇՄԱԳ միջազգային փորձագետները: Ուղեցույցը մշակել են ՄԱԿ-ի ԵՏՀ միջազգային փորձագետները՝ աջակցելու ազգային շահագրգիռ խմբերի կողմից <<Անդրասահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին>> կոնվենցիայի և համապատասխան ազգային օրենսդրության կիրառմանը: Խորհրդատվական բնույթի այս ուղեցույցում կտրվեն շրջակա միջավայրի վրա անդրասահմանային ազդեցության գնահատման յուրաքանչյուր քայլի վերաբերյալ մեկնաբանություններ և գործնական կիրառության համար անհրաժեշտ առաջարկություններ՝ համաձայն Կոնվենցիայի, և հաշվի առնելով ՇՄԱԳ վերաբերյալ ՀՀ վերանայված և ներկայումս հաստատման փուլում գտնվող օրենսդրության պահանջները (<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք, կամ ՇՄԱԳ օրենք):

Առցանց հանդիպման ընթացքում ակնկալվում է՝

- պարզաբանել տարբեր պետական մարմինների և հասարակական ոլորտի սուբյեկտների կարգավիճակը ՇՄԱԳ, հատկապես՝ անդրասահմանային ՇՄԱԳ գործընթացում,
- քննարկել Ուղեցույցում անդրասահմանային ՇՄԱԳ ընթացակարգային և բովանդակային հարցերի ներառման ծավալը,
- հասկանալ, թե ինչ փուլում է գտնվում ՇՄԱԳ վերաբերյալ ՀՀ օրենսդրության վերանայման գործընթացը՝ Ուղեցույցը վերջնական տարբերակի վրա կառուցելու նպատակով (օրինակ՝ ժամկետներ, ռեսուրսներ, կարողություններ),
- քննարկել անդրասահմանային համատեքստում ՇՄԱԳ կիրառման գործնական քայլերը և մեխանիզմները,

- որոշել գործանական օրինակների/ձևաթղթերի այն շրջանակը, որոնք անհրաժեշտ կլինի ներառել Ուղեցույցում:
- որոշել Ուղեցույցի հավելվածների բովանդակությունը և դետալիզացիայի աստիճանը:

Մասնակիցներ

Առցանց խորհրդատվական քննարկմանը կմասնակցեն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչները, ՄԱԿ-ի ԵՏՀ <<EU4Environment>> ծրագրի համակարգողը, ՄԱԿ-ի ԵՏՀ ծրագրի համակարգողի օգնականը, ՇՄԱԳ միջազգային և ազգային խորհրդատուները:

Գործնական տեղեկատվություն

COVID-19 համավարակի տարածմամբ պայմանավորված սահմանփակումների պատճառով այս խորհրդատվությունը կանցկացվի առցանց: ՄԱԿ-ի ԵՏՀ-ը կիրականացնի քննարկման տեխնիկական ապահովումը:

<<EU4Environment>>-ի մասին

“Եվրոպական Միությունը հանուն շրջակա միջավայրի” ծրագիրը նպատակ ունի աջակցելու վեց գործընկեր պետությունների՝ Հայաստանին, Բելառուսիային, Վրաստանին, Ադրբեջանին, Մոլդովային և Ուկրաինային պահպանելու նրանց բնական կապիտալը և բարելավելու մարդկանց՝ շրջակա միջավայրով պայմանավորված բարեկեցությունը: Այս նպատակին ծրագիրը նախատեսում է հասնել՝ աջակցելով շրջակա միջավայրի վերաբերող գործողություններին, կանաչ զարգացման հնարավորությունների ներկայացմամբ և ստեղծմամբ, և շրջակա միջավայրի ռիսկերի ու ազդեցությունների ավելի արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրմամբ:

Գործողությունը ֆինանսավորում և իրականացնում են հինգ գործընկեր կազմակերպություններ՝ ՏՀԶԿ, ՄԱԿ-ի ԵՏՀ, ՄԱԿ-ի ՇՄԾ-ն, ՄԱԿ-ի ԱԶԿ-ն և Համաշխարհային բանկը՝ 20 միլիոն եվրո բյուջեի հիման վրա: Գործողության իմպլեմենտացիայի ժամանակահատվածը 2019-2022 թվականներն են:

Հետագա տեղեկատվության համար դիմել հետևյալ էլ. հասցեին EU4Environment@oecd.org :

ՕՐԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԻԾ

Տևողություն	Քննարկվող հարց
11.00-11.10	<p>Բացում <i>Գիտությունների թեկնածու, դոկտոր Իրինա Ղափյանյան (ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ, <<EU4Environment>> ծրագրի ազգային համակարգող)</i></p>
11.10-11.20	<p>Առցանց հանդիպման վերաբերյալ ներածական խոսք <i>Լեոնիդ Կալաշնիկ (ՄԱԿ-ի ԵՏՀ, <<EU4Environment>> ծրագրի համակարգող)</i> <i>Մաիա Գալեշիլաձե-Բոժեակու և Գոռ Մովսիսյան (ՄԱԿ-ի ԵՏՀ միջազգային փորձագետներ)</i></p>
11.20-11.40	<p>Ուղեցույցի հիմնական բաժինների և բովանդակության ներկայացում <i>Մաիա Գալեշիլաձե-Բոժեակու և Գոռ Մովսիսյան (ՄԱԿ-ի ԵՏՀ միջազգային փորձագետներ)</i></p>
11.40-12.40	<p>Ուղեցույցի կիրառմանը վերաբերող գործնական մեխանիզմների և բովանդակային ու ընթացակարգային հարցերի քննարկում (Մաս I) <i>Բոլոր մասնակիցները</i> <i>Քննարկման վարողներ՝ Մաիա Գալեշիլաձե-Բոժեակու և Գոռ Մովսիսյան (ՄԱԿ-ի ԵՏՀ միջազգային փորձագետներ)</i></p>
12.40-13.40	<p>Ուղեցույցի կիրառմանը վերաբերող գործնական մեխանիզմների և բովանդակային ու ընթացակարգային հարցերի քննարկում (Մաս II) <i>Բոլոր մասնակիցները</i> <i>Քննարկման վարողներ՝ Մաիա Գալեշիլաձե-Բոժեակու և Գոռ Մովսիսյան (ՄԱԿ-ի ԵՏՀ միջազգային փորձագետներ)</i></p>
13.40-13.50	<p>Քննարկման ամփոփում, հետագա քայլեր <i>Մաիա Գալեշիլաձե-Բոժեակու և Գոռ Մովսիսյան (ՄԱԿ-ի ԵՏՀ միջազգային փորձագետներ)</i></p>
13.50-13.55	<p>Փակման խոսք <i>Լեոնիդ Կալաշնիկ (ՄԱԿ-ի ԵՏՀ, <<EU4Environment>> ծրագրի համակարգող)</i> <i>TBC (ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն)</i></p>